Ա Ռ Ա Ր Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԹԻՎ ԹԻՎ 191-Ա, 198-Ա, 199-Ա, 202-Ն, 207-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 191-Ա որոշման հավելվածի 7-րդ կետում պաշտոնի անվանումը սխալ է գրառված:

Թիվ 198-Ա որոշման մեջ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասին 7-րդ կետին կատարված հղում սխալ է, անհրաժեշտ էր հղում կատարել Գյումրի համայնքի ավագանու համապատասխան որոշմանը՝ համաձայն որի սահմանվել է համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը: Որոշման 1-ին կետում նշված «Երկրորդային շուկայից բանակցային ընթացակարգի կիրառմամբ՝ առանց գնման հայտարարությունը նախապես հրապարակելու» գնման ընթացակարգը հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի դրույթին, համաձայն որի գնում կատարելու նման ընթացակարգ նախատեսված չէ:

Բացի այդ որոշման մեջ հղում է կտարվել ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 256-Ն որոշմամբ հաստատված կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերությանը, սակայն ՀՀ կառավարությունը 2017 թվականի մայիսի 4-ին 256-Ն որոշում չի կայացրել:

Թիվ 199-Ա որոշմամբ կատարված փոփոխությունը թերի է գրառված (անհրաժեշտ էր փոփոխություն կատարել նաև Գյումրի համայնքի ավագանու 2020 թվականի հունիսի 10-ի N 96-Ա որոշմամբ հաստատված հավելվածում):

Թիվ 202-Ն որոշման հղումը «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածին սխալ է: Որոշման 2-րդ կետով ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 216-Ն որոշումը, որի անհրաժեշտությունը չկար: Որոշման հավելվածի տեղական տուրքերի բաժնի 4-րդ կետում նշված տեղական տուրքի անվանումը անհրաժեշտ է համապատասխանեցնել «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով սահմանված տեղական տուրքի անվանմանը:

Թիվ 207-Ա որոշմամբ համաձայնություն է տրվել աճուրդային եղանակով օտարել համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության թվով 4 կտոր հողամասեր, իսկ թիվ 208-Ա և թիվ 209-Ա որոշումներով համաձայնություն է տրվել մրցույթով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրել հողամասեր, սակայն պետության և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն օտարելու (ուղղակի կամ աճուրդով վաճառելու), վարձակալության, կառուցապատման իրավունքով տրամադրելու դեպքերում՝ վաճառքի կամ մեկնարկային նվազագույն գների հաշվարկման համար անհրաժեշտ է ղեկավարվել 2021 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» ՀՕ-225-Ն ՀՀ օրենքի դրույթներով:

Հարցի վերաբերյալ ՀՀ Շիրակի մարզպետի 2020 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 01//12275-2020 գրությամբ ուղարկվել են ՀՀ կադաստրի կոմիտեի նախագահի համապատասխան պարզաբանումները:

27.01.2021թ.